

աստիճանական իջումն կամ փոփոխութիւն մը մտնելով՝ բառերու այլայլութիւնը պատճառեր է . և աս տեսութիւնը ետքէն սեփականեցին ընդհանուր հնդկա-եւրոպական լեզուաց ցեղին : Իս բաղդատութիւնը շատ հետաքրքրական ու ախորժելի թերեւ կրնար ըլլալ բանագիտաց . բայց որովհետեւ օրագրիս սահմանը չներեր մեզի զայն , գոհ կ'ըլլանք դնելու հոս յոյն ու լատին լեզուովք՝ հարաւային լեզուաց

օրինակի համար , Կոթական ու դուտէսք լեզուներով՝ հիւսիսային լեզուաց օրինակի համար , սլաւոն ու կելտ լեզուովք՝ արեւելքի ու արեւմուտքի լեզուաց օրինակի համար , քմային , աւստրալային ու կոկորդային բաղաձայնները , որոնք միայն կարեւոր են . որովհետեւ միւս բաղաձայնները ոչ երբեք կը զանազանին , և ձայնաւորները միշտ կը զանազանին :

Յունարէն	Լատիներէն	Գոթական	Դուտէսք	Սլաւոն	Կելտ ¹
π	p	f	b, v	p	p, f
β	b	p	f	b	b
φ	f	b	p	b	bh, v
τ	t	th	d	t, c	t
δ	d	t	z	d	d
θ	th	d	t	d	dh
κ	c	h	g, h	k, ch	c
γ	g	k	ch	g	g
χ	ch	g	k	z	gh

Գոթացիք երբոր խառնուեցան հռոմայեցւոց հետ ու քրիստոնէութեան գարձան՝ Խտալիոյ , Կաղղիոյ ու Սպանիոյ մէջ , քրիստոնէական օրինաց ու ճշմարտութեանց (թէպէտ և արիանոսաց մոլորութիւններն ընդունեցան) ան ժամանակի լեզուն ալ , այսինքն լատիներէնը , առին : Բիւտ ատենէն հրապարակական գործոց մէջ լատիներէնը սկսաւ գործածուիլ , և վերջապէս բոլորովին ջնջեց վերուց անոնց լեզուն : Իսկ լեզուին հետ անհետացան անամէն հեթանոսական սրբազան ընթերցուածները , ան դիւցազնական դէպքերու պատմութիւններն ու ան ազգային երգերը , որ հիմակուան ատենի գրականներուն շատ սիրելի պիտի ըլլային իրենց հնութեամբն և իրենց բնական ու պարզ բացատրութեամբը : Բայց Գոթաց այս նախնական աւանդութիւնները անդառնալի կերպով կորսուած են , ինչպէս որ նոյն թշուառ բաղդը հանդիպած է նաև իրենց պատերազմակից ժողովրդոց ալ՝ Ռուրգոն-

տեանց , Լոնգոբարտաց , Փռանգաց , հին Ինգլիացւոց , որոնք ընդխառնեցան 'ի կելտական ցեղն՝ հռոմէական հզօր ազդեցութենէն մղուած :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լուդովիկոս ԺԶին վարքն ու մահը :
(Տես երես 332)

Յունուարի 1^{ին} թագաւորին անկողնոյն քով մօտիկցայ և աղաչեցի որ ընդունի իմ բարեմաղթութիւններս որ իրեն աս թշուառութիւններէն խալըսելու համար կ'ընէի : « Երբեք չեմ , պատասխանեց ինքը , ամենայն սրտով քու

¹ Մէկ երկու օրինակ բերենք հոս . Յն . πατηρ (Բաթէր) , Լատ . pater, Գթ . fadar, Դատ . vatar. — Յն . φερω (Քէրօ) , Լատ . fero, Գթ . baira, Դատ . piru. — Յն . δυο (Դուօ) , Լատ . duo, Գթ . tvai, Դատ . zuei. — Յն . το (Դօ) , Գթ . that, Դատ . daz. — Յն . δαυρα (Դաւրա) , Գթ . daur, Դատ . tor. — Յն . γένος (Էնոս) , Լատ . genus, Գթ . kuni, Դատ . chuni.

բարեմաղթութիւններդ, և ան միջոցին ձեռքը ինծի երկնցուց, որն որ համբուրեցի ու արցունքներովս թրջեցի: Երբոր անկողնէն ելաւ, պահապաններէն մէկուն աղաչեց որ իր կողմանէ երթայ ու տեղեկանայ իր ընտանեաց ինչպէս ըլլալը ու իրենց նոր տարի շնորհաւորէ: Սահապաններուն սիրտը շարժեցաւ թագաւորին աս խեղճ և ողորմուկ ձայնին, և թէ ինչ կերպով ինքը կը խօսէր: « Ինչո՞ւ համար, պահապաններէն մէկը ըսաւ ինծի՝ թագաւորին իր խուցը մտնելու ատենը, չխընդրեր որ նորէն իր ընտանիքը տեսնայ. հիմա որ քննութիւնը լմնցաւ, յարմարեցնելը շատ դժուար բան է. լաւ կ'ըլլայ ժողովքին առաջարկելը »: Եւ թագաւորն զացող պահապանը իր պատգամաւորութիւնը ընելով դարձաւ և ըսաւ թագաւորին՝ որ իր ընտանիքը շատ շնորհակալ կ'ըլլայ իրեն ըրած բարեմաղթութիւններուն համար, և թէ իրենք ալ նոյնը և աւելին ևս կը մաղթեն իրեն. « Ի՞նչ գեղեցիկ տարեգլուխ », ըսաւ թագաւորը:

Եւ նոյն իրիկունը համարձակեցայ թագաւորին առաջարկելու ու ըսի, որ եթէ ինքը Վաշնակցաց ժողովքէն հրաման խնդրելու ըլլայ իր ընտանիքը տեսնալու համար, անտարակոյս դէմ չեն դառնար: « Վանի մը օրէն անշուշտ եմ որ աս մխիթարութիւնս ինծի կը շնորհեն, ըսաւ թագաւորը. բայց պէտք է որ սպասենք »:

Վանի որ դատավճռոյն ատենը կը մօտենար (թէ որ ասանկ կրնանք անուանել թագաւորին վրայ եղած քննութիւնները), այնչափ ալ սրտիս վախն ու տագնապը կը սաստկանար. հազարումէկ բան կը հարցընէի պահապաններուն, և անոնց տուած ամէն մէկ պատասխանը զիս աւելի կ'ահաբեկէր: Եւ կինս ամէն շաբաթ զիս տեսնալու կու գար, և ամէն մէկ գալուն ինծի կ'իմացընէր Վարիզու մէջ հանդիպած բաները. այնպէս մը կ'երևար որ խիստ շատին կարծիքը թագաւորին կողմն ըլլայ, որն որ Գաղղիական և Վօրլէյի

կոչուած թատրոններուն մէջ ցուցուցեր էին: Վաղղիական թատրոնին մէջ կը ձևացընէին Բարեկամ օրինաց թատրերգութիւնը. ասոր մէջի եղած թագաւորին քննութեանը վերաբերեալ ամէն մէկ մասերը առանձին ուշադրութեամբ մը մտիկ ըրեր էին, ու ժողովուրդը ծափահար ցնծութեամբ ընդուներ էր զանոնք: Եւ Սօտրվիլի թատրոնին մէջ, ուր որ Շուշանայ դէպքը կը ձևացընէին, դերսման մը երկու չար ծերերուն ասանկ կ'ըսէր. « Ի՞նչպէս կրնաք դուք ամբաստանողի և դատաւորի պաշտօնը մէկտեղ կատարել », և ժողովուրդը շատ անգամ աս կտորս կրկնել տուաւ: Եւ առջի թատրերգութենէն օրինակ մը թագաւորին տուի: Եւ իշտ իրեն կ'ըսէի և համոզուած ալ էի, որ ժողովքին անդամները ամէնքը բանի մը միաբան չըլլալով, գոհ կ'ըլլային միայն զինքը բանտի, կամ շատ շատ աքսորանքի դատապարտելու. « Եւ տուած տայ, պատասխանեց ինքը, որ աս չափաւորութիւնս գոնեայ ընտանեացս բանեցընէին. ես և ոչ աս բանիս յոյս ունիմ »:

Վանի մը անձինք ինձի իմացուցին իմ կնոջս ձեռքովը՝ թէ Ս. Վարիզոյին քով, որ Աֆնօրեայ ըսուած լրագրին խմբագիրն էր, մասնաւոր մեծկակ գումար մը ստրկի կայ թագաւորին պիտոյիցը համար հաւաքուած. ուստի աղաչեցին ինձի որ աս բանիս վրայ թագաւորին միտքը իմանամ, ու ըսեմ իրեն՝ որ եթէ ինքը աս գումարս ուզենայ ընդունիլ, իրենք Ս. Վալէրպին կրնային անցընել ստակը: Իմացուցի թագաւորին աս բանս. « Շնորհակալ եղիր իմ կողմանէս, ըսաւ, այն անձանց. չեմ կրնար իրենց ազնուական սրտին աս ընծան ընդունիլ, որովհետեւ ասով զիրենք վտանգի մէջ ձգած կ'ըլլամ », Եւ աղաչեցի իրեն որ գոնեայ աս բանիս վրայ Ս. Վալէրպին հետ խօսի. և ինքը խոստացաւ որ ըսածս կատարէ:

Եւ թագաւորական ընտանեաց մէջ եղած գաղտուկ թղթակցութիւնը կը

շարունակուէր : (Թագաւորը իմացաւ որ իր աղջիկը հիւանդ էր , ու աս բանիս վրայ քանի մը օր սիրտը անհանգիստ եղաւ : (Թագուհին խել մը աղերսագիրներէն ետքը՝ վերջապէս հրաման ընդունեցաւ որ Պ . Պրիւնիէ արքունական պալատին բժշկաց մէկը՝ կարենայ Տաճարը մտնալ . կարծես թէ աս լուրը հանդարտեցուց զթագաւորը :

Յունուարի 15^{ին} չորեքշաբթի օրը վճռոյն ելլալու նախընթաց իրիկունը՝ ուրիշ անգամներուն պէս փաստաբանները թագաւորին եկան , և Պ . Տրսէզը ու Պ . Վրոնշէն իմացուցին իրեն՝ որ երկրորդ օրը չէին կրնար գալ :

16^{ին} առաւօտը Պ . Սալէրայ խել մը ատեն թագաւորին հետ խօսեցաւ . և դուրս ելլելու ատեն ըսաւ իրեն՝ որ երբ տեղեկանալու ըլլայ (Վոդոքոյ ատենին վրայօք բան մը , շուտով կու գայ իրեն ալ ծանուցանելու : (Բայց ժողովքը ինչուան գրեթէ կէս գիշեր երկրնալով՝ հրովարտակը 17^{ին} առաւօտը հրատարակուեցաւ :

Ս երոյիշեալ օրուան իրիկունը ժամը վեցին՝ չորս քաղաքական սպաներ թագաւորին խուցը մտան և Հասարակութեան ատենին հրովարտակ մը իրեն կարդացին , որուն մէջ պարզ կերպով կ'իմացընէին իրեն՝ որ անկէ ետքը գիշեր ու ցորեկ իրեն քովը պահապան տիտի կենան ան չորս քաղաքական սպաները , և թէ անոնցմէ երկուքը գիշերը իր անկողնոյն քով պիտի հսկեն : (Թագաւորը հարցուց անոնց՝ թէ իր վճռիւր հրատարակուած էր : (Անոնցմէ մէկը , որուն անունը Տիւ Վուր էր , թագաւորին թեւաւոր աթոռին վրայ նստաւ՝ ան միջոցին որ թագաւորը ոտքի վրայ կեցեր էր , ու պատասխանելով ըսաւ՝ թէ “ (Ամենեին հոգ մը չեմ ընէր (Կաշնակից ժողովքին որոշմունքներն իմանալու . բայց լսեցի որ (Վոդոքոյ ատենը իր քննութիւնները կը շարունակէ , : (Բիւշ մը ետքը Պ . Սալէրայն եկաւ , ու ըսաւ թագաւորին՝ որ դեռ չէր լմընցած (Վոդոքոյ ատենին քննութիւնը :

(Վոյն միջոցին խուցերէն մէկուն կրակարանը բռնկելով՝ Տաճարին մէջ կրակ ինկաւ : (Վոդովուրդը գաւթին մէջ խոնեցաւ . քաղաքական պաշտօնաւորանին սպաներէն մէկը սարսափած կերպով մը թագաւորին խուցը մտաւ , ու ըսաւ Պ . Սալէրային որ մէկէն ելլէ երթայ : (Թագաւորը գնաց Պ . Սալէրայ , խոստանալով որ կը դառնայ նորէն՝ վճռուր իմացընելու համար : (Բայց ան ատեն հարցուցի աս սպային իր անասախճանի սարսափելուն պատճառը . “ Տաճարին մէջ կամաւ կրակ ձգեցին , պատասխանեց , որ ան խառնակութեան մէջ կարենան (Կարեգը ազատել . բայց ես շուտ մը աշտարակին բոլորտիքը պահապաններով ամրացուցի , : (Բիւշ ատենէն իմացուեցաւ որ կրակը մարեր էր , և թէ պարզ դիպուածով մը միայն եղեր էր :

Հինգշաբթի օրը , յունուարի 17^{ին} , առաւօտեան իննին ատեններն եկաւ Պ . Սալէրայ , որուն ես ընդ առաջ ելայ . “ (Ա՛յ դարման չկայ , ըսաւ . թագաւորը դատապարտուեցաւ , : (Թագաւորը տեսնելով որ կու գայ , ոտքի ելաւ զինքը ընդունելու : Պ . Սալէրայ ոտքը ինկաւ շունչը բռնուած , և քանի մը վայրկեան անանկ կեցած չկրցաւ բան մը ըսել . թագաւորը ոտք հանեց զինքը , և գորովալիւ կերպով մը իրարու հետ գրկուեցան : Պ . Սալէրայ իմացուց իրեն որ մահուան դատապարտուեցաւ . այս դառն գուժին թագաւորը ամենեին զարմանք մը կամ այլալուծիւն մը վերան չերեցուց , և անանկ մը կ'երեւար որ ան պատկառելի ծերունիէն աւելիցաւ մը չգգայ , ու սկսաւ միտթարել զանիկայ :

Պ . Սալէրայ պատմեց թագաւորին թէ ինչ կերպով եղաւ (Վոդոքոյ ատենին քննութիւնը . ամբաստանողք , ազգականք , անձնական թշնամիք , աշխարհականք , եկեղեցականք , ազգային ամէն նուիրակները , բոլորն ալ քուէ ձգեր էին . և ամէն տեսակ ապօրինաւոր հնարքներ բանեցընելով ալ հանդերձ զինքը մահուան դատապարտելու

Համար , 5 քուէ միայն աւելի ելած էր :
Վերադարձնէն ումանք թէպէտ և մա-
հաւան դատապարտեր էին զինքը , բայց
կ'ուզէին որ դատակնքոյն կատարուամբ
ուշանայ . ասոր համար որոշուեր էր որ
երկրորդ անգամ մը նորէն գումարուի
Վողդոյ ատեանը . որ եթէ աս բանս
իրաւցնէ կատարուէր , շատ հաւանա-
կան էր թէ այս անօրէն վճիռը կրնար
փոխուիլ , երկու չափաւոր կողմերը ի-
րարու հետ միաբանելով , այսինքն մա-
հը ուշացնել ուղղուներն ու բնաւ սպան-
նել չուղղները : Բայց 'արիւնահեղ
մարդկանց խումբ մը , որոնք () ուէանի
դքսէն ու Վարիզու նուիրակներէն կա-
շառք կերած էին , ժողովարանին դրան
առջև կեցած՝ իրենց ահաւոր ոռնալու
ձայներովն ու սպառնալիքներովը կը
վախցնէին ժողովականները , եթէ ի-
րենց ուղածին համեմատ չորոշեն նէ .
ասանկով՝ ապերախտ մայրաքաղաքը
չուզեց ու չհամարձակեցաւ փրկել իր
թագաւորը :

Կը շարունակուի :

Բ Ա Մ Կ Ա Ա

ԱՍՏԵՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

Զմեռնային արեւադարձ :

Ղաղիկայ ամսուս 21^{ին} , ըստ նորոց ,
ձմեռնամուտ է , և արեւը այժեղջեր ա-
րեւադարձը կը մտնէ , այսինքն հարա-
ւային կիսագնտոյն վրայ արեւը իր ըն-
թացից վերջին սահմանը կը հասնի , ու
անկէ կը սկսի նորէն դէպ 'ի հասարա-
կած դառնալ : Նոյն օրը հարաւային
կիսագնտոյն բնակիչներուն բոլոր տա-
րւոյն երկայնագոյն օրն է ու անոնց ա-
մառ կը սկսի , ու հակարձային բւեռին
տակն եղող երկիրներուն ալ արեւը չմըտ-
նէր : Իսկ այս կիսագնտոյս արեւադար-
ձին տակն եղող բնակչաց դագաթին
վրայէն կ'անցնի արեւը , ու իր լուսոյ
հոսանքները և կրակէ ուղիները անոնց

վրայ կը թօթափէ շեշտակի : Բայց օրս
Սահարայի մեծ մասին , Սատակաս-
գարի , Վաղղիոյ ու Սիաբանութեան
կղզեաց , կեդրոնական Ղաստրալիոյ ,
'Լոր Վալետոնիոյ , Վարակուայի ու
Պրազիլի մեծ մասին մէջ մարմինները
ամենեւին շուք չեն ձգեր կէսօրը :

Սեզի , որ հիւսիսային կիսագնտոյն
վրայ էնք , բոլորովին հակառակ երեւոյ-
թը կը պատահի , ձմեռ կը սկսի և տա-
րւոյն ամենէն կարճ օրը կ'ըլլայ : Սե-
րալային բւեռի երկիրները խոր գիշե-
րուան մէջ կ'ընկղմին , և ցուրտը՝ ձիւնն
ու սառամանիքը իրեն օգնական ա-
ռած , այն կողմերէն հետզհետէ դէպ
'ի բարեխառն գօտիները կը դիմէ :

Սեիցալերկ չորս ամսուան երկայն գի-
շերը պատեր է , ամսէ մը 'ի վեր է որ
հիւսիսային Վալսին ալ շօշափելի խա-
ւարի մը մէջ կը խարխափէ : Վառնէոյ
գիշերը քսանուիրեք ժամ կը տևէ , և
կէսօրը արեւը հորիզոնին մօտ քերելով
հազիւ թէ ժամ մը իր տեղոյն կարմիր
սկաւառակը այն տեղի բնակչաց կը ցու-
ցնէ : Սեդրոյմ , Սեդրալուրկ , ու Վա-
պուք հինգ ժամ ցորեկ ու տասնուինը
ժամ գիշեր է : Վարիզ եօթնուկէս
ժամ ցորեկ է ու տասնըվեցուկէս ժամ
գիշեր . իսկ Պոլիս ինն ժամ ցորեկ է
և տասնհինգ ժամ գիշեր : Բըշալոյսն
ու վերջալոյսը մեր օրերուն այս կար-
ձութիւնը կ'երկարեն , և այնչափ ա-
ւելի կը տևեն , որչափ որ երկիր մը դէպ
'ի հիւսիս է :

Զմեռնային արեւադարձին մեզի ձը-
մեռ կը սկսի ըսինք , և խոր ձմեռն ,
զոր հաճկները Գաբա Գըշ կ'ըսեն , ու
սաստիկ ցուրտը կը կոխէ : Բայց բանիս
պատճառ մարդ կրնայ կարծել թէ ձը-
մեռն արեւուն մեղմէ հեռանալն ըլլայ ,
որով իր ճառագայթներն երկար ճամբէ
գալով ջերմութիւննին կորսնցուցած
ըլլան : Բըւր ոչ միայն ձմեռն ամա-
ռուրնէ աւելի երկրէս չհեռանար , այլ
նաեւ դեկտեմբերի 21^{ին} աւելի մօտ է
մեզի քան թէ յունիսի 21^{ին} : Բըւ այս
բանիս ստուգութիւնն իմանալը ամե-
նեւին դժուար չէ . բաւական է որ ձե-